1328

21

Armenian
Basketball A-League

NGO "Armenian Basketball A-League"
A. Khachatryan 33, Yerevan, Armenia

Գյումրի համայնքի ղեկավար
Պարոն Վարդգես Սամսոնյանին
Բասկետբոլի Ա-Լիգայի նախագահ
Արա Պողոսյանից
21/01/2022

Դիմում

Հարգելի պարոն Սամսոնյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ բասկետբոլի Հայաստանի առաջնության՝ Ա-Լիգայի և առաջնության հովանավոր «Վբեթ» ընկերության կողմից առաջնության 2021/22 մրցաշրջանում իրականացվում է «Միավորվենք» սոցիալական նախաձեռնությունը, որի շրջանակում նախատեսվում է կառուցել կամ վերակառուցել Հայաստանի տարածքում գտնվող բասկետբոլային խաղահրապարակ: Հաշվի առնելով այն, որ Գյումրին սպորտային մեծ ավանդույթներ ունեցող քաղաք է, և Հայաստանի առաջնությունում ունի իր ներկայացուցիչը՝ «Գյումրի Ֆալկոնս» թիմը, ցանկություն կա խաղահրապարակը կառուցել Գյումրի քաղաքում, ինչի համար ակնկալում ենք Ձեր աջակցությունը:

Նախատեսվում է կառուցել բացօթյա բասկետբոլային խաղահրապարակ՝ 28մ*15մ չափով, որը առանձնացված կլինի մետաղական ցանցերով: Ըստ տարածքի՝ կդիտարկվի նաև ոչ մեծ քանակի տրիբունաների կառուցումը և լուսավորության ապահովումը: Նախագիծը կկազմվի ըստ առաջարկվող տարածքի պարամետրերի: Մենք պատրաստ ենք հոգալ խաղահրապարակի կառուցման ամբողջ ծախսը, որից հետո այն հանձնել համայնքին, ընդ որում՝ ամեն ինչ կատարել 2022թ. առաջին կեսի ընթացքում:

Համայնքից խնդրում ենք տրամադրել համապատասխան չափերով տարածք, որը նաև կլինի հարմար բասկետբոլային խաղահրապարակի հետագա օգտագործման համար, կլինի հնարավորինս մոտ քաղաքի կենտրոնին կամ այլ բանուկ հատվածներին:

Խնդրում ենք դիտարկել այս առաջարկը: Անհրաժեշտության դեպքում պատրաստ ենք հանդիպել և ավելի մանրամասն ներկայացնել ծրագիրը:

Հարգանքով՝
Ա-Լիգայի նախագահ
Արա Պողոսյան

Ստացված է 24 01 20 22 թ.
Գրանցված է № 1328